

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՐՈՍՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ ՀՐԱԶԻԿԻ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
համար

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2013 թ.

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Գևորգի Ճուղուրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սարգիս Լևոնի Ղանթարջյան

տնտեսագիտության թեկնածու
Գուրգեն Արթուրի Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն Հայ-Ռուսական (Սլավոնական)
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. նոյեմբերի 15-ին, ժամը 15⁰⁰ – ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան փ. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թվականի հոկտեմբերի 14-ին:

015 մասնագիտական
տեխնիկական գիտությունների

խորհրդի գիտական քարտուղար,
դոկտոր, պրոֆեսոր Ա.Յ. Առաքելյան

The goal of this thesis is to work out a system of investment effectiveness management in tourism sphere which intends the solving of the following raised tasks, such as:

- exposure of business climate peculiarities in tourism sphere in Armenia and presentation of consolidated the tourism service results on macro and micro economy levels,
- elaboration of new approaches in system looking management of investment effectiveness in tourism industry
- exposure of management decisions in investment sphere of tourism developing process.

The scientific novelty is in presenting of a new economical mechanism for evaluating investment effectiveness and management in tourism sector. Particularly:

- exposed investment tendency in tourism, discovered priorities in RA tourism industry sector development, made improvements in tourism service pricing policy process framework,
- suggested disparate ways for financing of tourism sector development, bases on governmental and privet sector motivations concerning to resources optimal and realistic amalgamation,
- verified necessity of supervision and regulation in tourism investment process and basis on this, presented new national accounts, giving opportunities for complexly information supplying and assemblage of tourism industry development results in macro economy level,
- substantiated necessity for transformation investment efficiency assessment process from static to dynamic level, taking into consideration limits of investments resource limitation in tourism sector.

Implementation of research results in tourism sector investments efficiency field will promote the process of discovering priorities investment options in tourism industry and effective decision making for optimal distribution resources tourism service development in RA.

Poghosyan Hrachiky Siranush

"The Investment Management Issues
in Tourism Sector of the Republic of Armenia "

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Economics in the Field of “Economics, Management of economy and its Sectors” 08.00.02

The Defense of the dissertation will be take place at 15⁰⁰ on November 2013, at the Meeting of Specialized Council 015 of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Adress: 52 Abovyan Str., Yerevan, 0009, Armenia

SUMMARY

The transition to market economy caused a need to control and reforming the system of investment effectiveness estimation in tourism sphere. This problem became more appreciable after tourism has been announced by RA government a priory course for economic development. In conjunction with with this, control of investment effectiveness in tourism both in theory and in practice needs to be perfected in Armenia. First of all it concerns the system of informational supply of investment effectiveness estimation at macro economical level as well as at different tourism services segments in Armenia when there appear informational difficulties in mutual coordination between tourism service results and effects of their multiplication in other branches of economics.

Besides, the methodology of importance of investment effectiveness in tourism also needs to improvement, which in economical literature is regarded from different points, from our point of view, steel remains disputable, sometimes with opposing results. This problem in theoretical aspect is sharply appreciable at complex estimation of investment effectiveness in tourism industry when there arises necessity to measure not only direct but also accomplice economical results of additional services in tourism industry. From point of view, is coming necessity for consolidation of investment results and outcomes in tourism industry and related sectors of economy.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Զբոսաշրջային արդյունաբերությունը, համարվելով տնտեսավարման բարդ օրգանիզմ և առնչվելով տնտեսության տարբեր ոլորտներին, զարգանում է ֆինանսավորման տարբեր աղբյուրներով, անընդհատ կապիտալ ներդրումներ է պահանջում: Զբոսաշրջության բնագավառում ներդրումների արդյունավետ կառավարումը միշտ էլ հիմնախնդիր է հանդիսացել, քանի որ զբոսաշրջային արդյունաբերությունը, հանդիսանալով բարդ տնտեսական օրգանիզմ, ընդգրկում է ոչ միայն տնտեսավարման տարբեր ճյուղեր, այլև առնչվում է բնապահպանական, սոցիալական, մշակութային և հանրային նշանակություն ունեցող ոլորտների հետ: Երկրի հաջող զարգացումը մեծապես կախված է նաև տնտեսական այլ ոլորտներից, որոնցից են՝ տրանսպորտը, կապը, ապահովագրական գործը, տեղական ենթակառուցվածքների զարգացածությունը և այլն, որոնց ներդաշնակ գործունեության ապահովումը անհնար է առանց ներդրումային արդյունավետ քաղաքականության:

Զբոսաշրջային գործարարության զարգացմանն ուղղված ներդրումների արդյունավետ կառավարումը ներկայումս պահանջում է մի շարք հիմնախնդիրների լուծումներ: Ներդրումների արդյունավետ կառավարումը այլևս չի սահմանափակվում միայն ներդրումների հատույցի գնահատումներով, այլ ընդգրկում է տնտեսագիտական հետազոտությունների լայն շրջանակ, առնչվելով զբոսաշրջային ոլորտում ներդրումներից բխող տեղեկատվական հոսքերի համակարգման, զարգացման նպատակներով ծախսված ռեսուրսների արդյունավետության չափանիշների սահմանման, ինչպես նաև ներդրումային արդյունքների ձևավորման վերահսկողության իրականացման հետ:

Զբոսաշրջային ոլորտում ներդրումների տնտեսական գնահատման հիմնախնդիրները միշտ էլ գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Զնայած ներդրումների տնտեսական կարգավորման և կառավարման որոշ հիմնախնդիրներ արդեն իսկ ուսումնասիրության են արժանացել հայազգի (Ա. Աղաջանյան., Ա. Առաքելյան, Ի. Բարսեղյան, Վ. Կաջայան, Ա. Մինասյան, Դ. Դարությունյան, Ս. Պապոյան, Գ. Պապիրյան) և արտասահմանյան (Յու. Արսևի, Ա. Բաբկին, Վ. Բոգոլյուբով, Վ. Բուլյենկո, Ա. Դուրովիչ, Ա. Ջադոն, Բ. Ջորդով, Ն. Կաբուլչևիչ, Վ. Կվարտալև, Վ. Կոզիրև, Մ. Ժուկովա, Ե. Սոբոլևա, Բ. Սյուզեն, Վ. Խոաբովչենկո, Ա.

Չուղմոսկի, Գ. Յակովև և ուրիշներ) հետազոտողների կողմից, սակայն, մեր կարծիքով, դրանք չեն կրում ամբողջական և ավարտուն բնույթ և վերաբերում են զբոսաշրջային գործունեության առանձին ուղղություններին՝ նպատակ չունենալով ներկայացնելու զբոսաշրջային ոլորտում ներդրումների կառավարման համապարփակ մեխանիզմը:

Ներկայացվող ատենախոսությունում փորձ է արվել լրացնել այդ բացը՝ շեշտադրում կատարելով առավելապես ՀՀ զբոսաշրջային ոլորտում ներդրումների կառավարման և արդյունավետության համակարգային գնահատման մակրո և միկրոտնտեսական հիմնախնդիրներին, որն էլ նախորոշել է գիտական հետազոտության նպատակը և ատենախոսության առջև դրված խնդիրները:

Ատենախոսության առարկան և օբյեկտը:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտ են հանդիսացել ՀՀ զբոսաշրջային շուկան իր ենթակառուցվածքներով, ներդրումային գործընթացների ֆինանսական կառավարման գործընթացները, ինչպես նաև ՀՀ գործադիր իշխանության կողմից զբոսաշրջային գործարարության կարգավորման եղանակների, մեթոդների համակարգը:

Հետազոտության առարկան ՀՀ զբոսաշրջության ոլորտում ներդրումների պատճառահետևանքային մակրոտնտեսական արդյունքների չափման, համախմբված հաշվառման, վիճակագրության, ֆինանսական վերահսկողության և դրանց հիման վրա արդյունավետ կառավարչական որոշումների կայացման շրջանակն է:

Ատենախոսության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության նպատակն է՝ մշակել ՀՀ զբոսաշրջության ոլորտում ներդրումների կառավարման բարելավմանն ուղղված միջոցառումների համակարգ, որի իրագործումը պայմանավորվել է հետևյալ խնդիրներով.

- ելնելով զբոսաշրջային գործարարության առանձնահատկություններից՝ ներկայացնել ՀՀ-ում իրականացվող զբոսաշրջային ծառայությունների կազմակերպման մոտեցումները և դրանց բարելավման հիմնահարցերը,
- մշակել զբոսաշրջային ոլորտում ներդրումների արդյունավետությանը առնչվող տեղեկատվական հոսքերի արձանագրման և հաշվառման համակարգ, նրանում ընդգրկելով զբոսաշրջային շուկայի բոլոր մասնակից կողմերի ներդրումային գործունեությունից ակնկալվող

туризма, разработки новых подходов комплексной оценки эффективности инвестирования в отрасль.

Целью данного исследования является разработка системы управления эффективностью инвестиций в сфере туризма, что предполагает решение следующих поставленных задач, таких как:

- выявление особенностей бизнес климата в сфере туризма Армении, представление методологии консолидации и макроэкономического учета результатов услуг туристического сервиса,
- разработка новых подходов системного управления эффективностью инвестициями в сфере индустрии туризма,
- раскрытие особенностей управленческих решений в сфере инвестиций в процессе развития туризма.

Научная новизна заключается в представлении нового экономического механизма оценки эффективности инвестиций и управления в сфере туризма. В частности:

- на основе тенденций развития туризма, выявлены приоритетные направления инвестирования и ценообразования, исходя из особенностей развития рынка туристических услуг Республики Армения,
- исходя из мотивации со стороны государства и частного сектора в процессе инвестирования, предложены новые подходы диверсификации финансовых ресурсов на развитие сферы туризма в РА,
- обоснована необходимость государственного урегулирования в процессе инвестирования в сфере туризма и на этой основе предложена методика макроэкономического учета результатов инвестиций с помощью новых национальных субсчетов,
- учитывая особенности предлагаемых туристических услуг, разработана новая система критериев оценки инвестиций в сфере туризма и механизм принятия управленческих решений по эффективности внедрений.

Применение результатов исследования в сфере оценки эффективности инвестирования способствует не только выявлению приоритетных направлений развития туризма, но и оптимальному распределению экономических ресурсов в разных секторах туристической индустрии в РА.

Պոգոсяն Տիրանուշ Գրաչիկովնա

“Проблемы управления инвестициями
в сфере туризма Республики Армении”

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита состоится 15 ноября 2013 г. в 15⁰⁰ часов на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике действующего в ЕрГУ по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

С переходом на рыночные отношения возникла необходимость управления и реформирования системы оценки эффективности инвестиций в сфере туризма. Эта проблема стала более ощутима после оглашения туризма приоритетным направлением развития экономики правительством РА. Вместе с тем, управление эффективностью инвестиций в сфере туризма, как в теории, так и на практике нуждается в совершенствовании в Армении. Прежде всего, это касается системы информационного обеспечения оценки эффективности инвестиций, как на макроэкономическом уровне, так и в разных сегментах туристических услуг Армении, когда проявляются информационные трудности взаимосвязки результатов туристических услуг и эффекта их мультипликации в других отраслях экономики.

Кроме того, методология оценки эффективности инвестиций в сфере туризма также нуждается в совершенствовании, что в экономической литературе рассматривается с разных сторон, однако на наш взгляд, до сих пор остается спорным и порой с противоположными результатами. Особенно эта проблема в теоретическом аспекте остро ощущается при комплексной оценке эффективности инвестирования в индустрии туризма, когда возникает необходимость измерения не только прямых, но и побочных экономических результатов предоставляемых услуг в сфере туризма.

Следовательно, становится необходимым совершенствование системы информационного обеспечения управления инвестициями в сфере туристических услуг не только на микро, но и на макро уровне, анализа методологии рынка индустрии

и отраслей экономики и к управлению инвестициями в сфере туризма, а также к совершенствованию методологии измерения эффективности инвестиций в сфере туризма.

- ՀՀ զբոսաշրջային ծառայությունների շուկայի վերլուծության հիման վրա կատարել ներդրումային քաղաքականության տնտեսական գնահատում և առաջարկել կազմակերպական, իրավական բարեփոխումների միջոցով ակտիվացնել ներդրումային գործունեության գրավչության գործառույթները,
- ուսումնասիրել զբոսաշրջության գործունեության արդյունքների մակրոտնտեսական համախմբման բարելավման ուղիները՝ ներդրումների արդյունավետության գծով հաշվետվություններն օգտագործողներին առավել ընդգրկուն տեղեկատվության ներկայացման նպատակով,

Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել զբոսաշրջային ոլորտի կառավարման, և հատկապես, ներդրումային քաղաքականության իրականացման, վերլուծության, ֆինանսական վերահսկողության ու կարգավորման վերաբերյալ հայազգի և արտասահմանյան տեսաբանների աշխատությունները, գիտական հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները, ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի օրենսդրությունը և այն կարգավորող կամ դրան առնչվող նորմատիվային ակտերը: Ուսումնասիրվել են նաև կոնկրետ ներդրումային գործունեության վերաբերյալ նորմատիվային ակտեր, կանոնակարգեր և ֆինանսական տվյալներ, ՀՀ զբոսաշրջային շուկայի տնտեսական վիճակագրությունը և ուսումնասիրման բնագավառին առնչվող այլ նյութեր: Կիրառվել են ֆինանսատնտեսական վերլուծության, աուդիտորական գնահատման, վիճակագրական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ:

Ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը

Հետազոտության գիտական նորույթը ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի ներդրումների արդյունավետության գնահատման և կառավարման նոր համակարգի մշակումն է: Մասնավորապես, հետազոտության և առաջադրված խնդիրների լուծման ընթացքում ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են.

- ՀՀ զբոսաշրջային շուկայի զարգացման միտումների վերլուծությունների, ինչպես նաև զբոսաշրջային գործարարության

առանձնահատկությունների հիման վրա բացահայտվել են ոլորտում ներդրումների իրականացման առաջնայությունները և արդյունավետության բարձրացման ուղիներ, ինչպես նաև զբոսաշրջային ծառայությունների մատուցման որակի ապահովման և ճկուն գնային քաղաքականության իրականացման գործառույթներ,

- պետական և մասնավոր սեկտորի կողմից զբոսաշրջային ոլորտում իրականացվող ներդրումների շարժառիթների ուսումնասիրությունների հիման վրա առաջարկվել են զբոսաշրջության զարգացման ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման ուղիներ՝ նաև ներկայացնելով զբոսաշրջային գործարարության ոլորտում արդյունավետության աստիճանի վերահսկողության մշտադիտարկման համակարգ,
- հիմնավորելով զբոսաշրջային ծառայությունների մատուցման պետական կարգավորման անհրաժեշտությունը՝ մշակվել է ազգային հաշիվների համակարգ, որով իրենց մակրոտնտեսական համախմբումն են ստանում տնտեսության զարգացման վրա զբոսաշրջային գործարարության ներազդեցության ինչպես ուղղակի, այնպես էլ մուլտիպլիկացիոն հետևանքները՝ դրանով իսկ բարելավելով ներդրումների արդյունավետության գնահատման տեղեկատվական ապահովվածությունը,
- հաշվի առնելով զբոսաշրջային գործարարության առանձնահատկությունները և դրանով իսկ սահմանելով ներդրումների արդյունավետության չափանիշների համախումբ՝ մշակվել է ոլորտում ներդրումների կառավարման մեխանիզմ, արդյունավետության գնահատումը ստատիկ դաշտից տեղափոխելով դինամիկ ոլորտ՝ նկատի ունենալով ներդրումային ծրագրերի շուրջ անընդհատ փոփոխվող ռեսուրսային սահմանափակումներն ու գործոնային հակակշիռները:

Ատենախոսության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է զբոսաշրջային ոլորտում ներդրումների արդյունավետության գնահատման և կառավարման բնագավառի

4. ՀՀ-ում վարվող զբոսաշրջային արդյունքների վիճակագրությունը դեռևս չի արտացոլում ոլորտի գործոնային ազդեցությունը երկրի տնտեսության վրա: Ավելին, ներկայացնելով զբոսաշրջային ծառայությունների ծավալներն ու դրանցից բխող եկամուտները, վիճակագրական տեղեկատվությամբ հնարավորություն չի ստեղծվում գնահատելու զբոսաշրջային գործարարության ընդլայնումից ձևավորվող ուղղակի զուտ եկամուտները, զբոսաշրջային գործարարության մուլտիպլիկացիոն եկամուտները, զբոսաշրջության ոլորտ ներգրավվող լրացուցիչ ռեսուրսների այլընտրանքային ծախսերը, զբոսաշրջային գործարարությամբ պայմանավորված բնապահպանական վնասները, որով չի ապահովվում ոլորտում իրականացվող ներդրումների արդյունավետության կառավարման անհրաժեշտ տեղեկատվություն: Հետևաբար, տեսության և գործնական ոլորտում հիմնախնդիր է հանդիսանում զբոսաշրջության ոլորտում ներդրումների արդյունավետության գնահատման տեղեկատվական համակարգի բարելավման ուղիների առաջադրումը:

Ատենախոսության հիմնական դրույթները հեղինակի կողմից ներկայացվել են հետևյալ գիտական հրատարակումներում.

1. “Ներդրումների իրականացման առաջնահերթությունները ՀՀ զբոսաշրջության ոլորտում”, գիտական հոդվածների ժողովածու, Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարան, Երևան 2012 թ., էջ 169-174
2. “Զբոսաշրջության ծառայությունների պետական կարգավորման անհրաժեշտությունը, “Հանրային կառավարում” գիտական հանդես, Երևան N4, 2012 թ., էջ 49-56:
3. “Զբոսաշրջային գործունեության մակրոտնտեսական դրսևորումները”, “Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, Երևան, #5(143),մայիս 2012, էջ 48-49,
4. “Ներդրումների կառավարման հիմնախնդիրները զբոսաշրջության ոլորտի օրինակով”, “Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, Երևան, #3(153), մարտ, 2013 թ., էջ 12-13:
5. Կառավարիչների կրթության որակի կատարելագործումը զբոսաշրջային ոլորտում, “Բուհերի ակադեմիական ազատությունների և մրցակցային պայմանների ապահովումը՝ բարձրորակ կրթության գրավական”, միջազգային գիտաժողով, Հյուսիսային համալսարան, Երևան, 2013թ., էջ 129-131:

2. Ջրոսաշրջային ծառայությունների պետական կարգավորումը բխում է նաև ոլորտում ներդրումների իրականացման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից և պայմանավորված է հետևյալ հանգամանքերով:

Առաջին, զբոսաշրջության ինդուստրիան լինելով տնտեսավարման բարդ օրգանիզմ, չի կարող զարգանալ առանց այն սպասարկող ենթակառուցվածքային բարեփոխումների (տրանսպորտ, կապ, ճանապարհներ և այլն), ուստի ոլորտում իրականացվող ներդրումները անհրաժեշտ է կոորդինացնել պետական հովանու ներքո, ապահովելով զբոսաշրջային գործունեության համակարգի և այն սպասարկող տնտեսության ճյուղերի գործունեության ներդաշնակությունը:

Երկրորդ, զբոսաշրջության ոլորտում ներդրումների իրականացումը առնչվում է բնապահպանական, պատմաշակութային արժեքների վերահսկողության, ազգաբնակչության անվտանգության խնդիրների հետ և դրանից ելնելով, պետական կարգավորման կարիք է զգում:

Երրորդ, զբոսաշրջային ծառայությունների մատուցման ակտիվացումը լուծում է լրացուցիչ աշխատատեղերի, որակավորված կադրերի, տեղացի բնակչության միգրացիայի կանխարգելման, տարածքային համաչափ զարգացման հիմնահարցեր, ուստի այդ ոլորտում իրականացվող ներդրումները պետք է օպտիմալ բաշխվածությամբ դրսևորվեն, որը դժվար իրագործելի է առանց պետական միջամտության:

3. Ջրոսաշրջության ոլորտում ներդրումների մակրոտնտեսական դրսևորումների գնահատումը առնչվում է տեսական և գործնական մի շարք հիմնախնդիրների լուծումների հետ, որոնցից առաջնային է համարվում.

- ներդրումների ֆինանսավորման ծավալների հիմնավորումը ըստ զբոսաշրջային շուկայի առանձին հատվածների՝ զբոսաշրջային արդյունքի ձևավորում և վաճառք, զբոսաշրջային գործարարության աջակցում,
- ներդրումային բազմաբնույթ դրական և բացասական որակական ուղղակի արդյունքների շրջանակի մեկնաբանումը՝ զբոսաշրջությունը սպասարկող տնտեսության տարբեր փոխկապակցված ճյուղերի, սոցիալական և բնապահպանական կտրվածքով,
- ներդրումային փաստացի արդյունքների արձանագրման կազմակերպումը միկրոտնտեսական միջավայրում և այդ տեղեկատվության համակարգումը այնպես, որ հնարավորություն ընձեռվի կազմելու համապատասխան վիճակագրական հաշվետվություններ՝ վերլուծելու համար զբոսաշրջության ոլորտում ներդրումների մակրոտնտեսական դրսևորումները և գնահատելու դրանց արդյունավետությունը:

տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված ներդրումների արդյունավետության ինչպես մակրոտնտեսական կարգավորման, այնպես էլ՝ միկրոտնտեսական արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ զբոսաշրջային շուկայի մասնակից կազմակերպություններում՝ նպաստելով ներդրումների տնտեսական արդյունավետության չափման, գնահատման, վերլուծության, վիճակագրության և կառավարման ու տնտեսավարման կարգավորման հետ կապված առկա և հնարավոր հիմնախնդիրների լուծմանը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հավանության արժանացումը

Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ մի շարք աշխատանքային քննարկումներ են իրականացվել տնտեսագետ-տեսաբանների, էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կարգավորման և վերահսկողական կառույցների ներկայացուցիչների հետ: Կատարված հետազոտության առանձին դրույթներ քննարկվել և հավանության են արժանացել հանրապետական և միջազգային գիտաժողովներում (2012 թ., Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի գիտաժողով, Երևան, 2013 թ., Երևան՝ “Բուհերի ակադեմիական ազատությունների և մրցակցային պայմանների ապահովումը”): Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթներն իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի հինգ հրատարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 140 էջի վրա՝ առանց հավելվածների, գրականության ցանկը զբաղեցնում է 6, իսկ հավելվածները՝ 17 էջ: Ատենախոսությունը պարունակում է 9 աղյուսակ, 27 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում ներկայացվել են ատենախոսության թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը, խնդիրները, օբյեկտի առարկան, տեղեկատվության աղբյուրները, արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Ներդրումային դաշտի գրավչության ապահովման հիմնախնդիրները զբոսաշրջության ոլորտում»** գլխում քննարկվել են ներդրումների իրականացման առաջնահերթությունները, և ներդրումների խթանիչ ուղղությունները:

Հայաստանը, որպես ձեռնարկատիրական գործունեության և ներդրումների համար կայուն և ապահով, զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային և բնական ռեսուրսներով հարուստ երկիր, մեծ ներուժ ունի՝ միջազգային զբոսաշրջային շուկային առաջարկելու մրցունակ զբոսաշրջային արդյունք և բարձրակարգ ծառայություններ: Բնականաբար, այս զարգացումն ինքնին պահանջում է ավելի բարձր որակավորված աշխատուժ, ավելի մեծ ներդրումներ, բարձրակարգ ենթակառուցվածքներ և ծառայություններ, հետազոտությունների ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ և ավելի նպաստավոր գործարար միջավայր:

Հայկական զբոսաշրջային արդյունքի զբաղեցրած տեղը միջազգային զբոսաշրջային շուկայում ներկայումս բարվոք է: Չնայած հարուստ պատմամշակութային և բնական զբոսաշրջային ռեսուրսների առկայությանը՝ Հայաստանը ներկայումս չի դիտվում որպես համաշխարհային զբոսաշրջային կենտրոն: Համաշխարհային բնակչության ընդամենը չնչին մասն է լսել Հայաստանի մասին, գիտի թե որտեղ է այն գտնվում կամ պատկերացում ունի այն զբոսաշրջային գրավչությունների մասին, որ առաջարկում է երկիրը: Հետևաբար, Հայաստանը, որպես զբոսաշրջային ուղղություն, պատշաճ կերպով դիրքորոշվելու կարիք ունի համաշխարհային շուկայում: Սա իր հերթին պահանջում է զբոսաշրջային ռեսուրսների պատշաճ և մանրամասն գնահատում, համաշխարհային շուկայում պահանջարկի և հայկական զբոսաշրջային առաջարկի (զբոսաշրջային արդյունք, ծառայություններ) վերանայում: Դրան զուգահեռ, հայկական զբոսաշրջային արդյունքը պետք է պատշաճ կերպով խթանվի համաշխարհային շուկայի համապատասխանաբար ընտրված թիրախային սեգմենտներում (աշխարհագրական, սեռատարիքային, կրոնական, մշակութային և այլն):

մային ծախսերը և դրանց հետևանքները՝ արդյունավետության գնահատումը ստատիկ դաշտից տեղափոխվում է դինամիկ ոլորտ՝ հաշվի առնելով ներդրումային ծրագրերի շուրջ անընդհատ փոփոխվող ռեսուրսային սահմանափակումներն ու գործոնային հակակշիռները:

Երրորդ, սահմանվում է ներդրումների արդյունավետության չափանիշների համախումբ, հաշվի առնելով զբոսաշրջային գործարարության առանձնահատկությունները ու տնտեսական ակտիվության բնույթը:

Երրորդ, ներկայացվում է զբոսաշրջային գործարարության ոլորտում արդյունավետության աստիճանի վերահսկողության մշտադիտարկման համակարգ՝ ընդգրկելով զբոսաշրջային արդյունաբերության գործունեությունը միկրոմակարդակից մինչև մակրոմակարդակ և հիմք ստեղծելով մարտավարական ու ռազմավարական փոխկապակցված կառավարչական որոշումների համար:

Ատենախոսության «եզրակացություններ» բաժնում ներկայացվել են առաջարկություններ զբոսաշրջային ոլորտում ներդրումների կառավարման կատարելագործման ուղղությամբ:

1. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ զբոսաշրջության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների մեծամասնությունը փոքր և միջին ձեռնարկություններ են, որոնց կարողությունները բավականին սահմանափակ են ոլորտում զգալի ներդրումներ կատարելու համար: Այս առումով կարևորվում է զբոսաշրջության ոլորտի ներդրումային պետական կարգավորման գործընթաց՝ հետևյալ ուղիներով.

- պետության ֆինակալ քաղաքականության արդյունավետության բարձրացումը զբոսաշրջության համակարգում, որը հավասար մրցակցային պայմաններ կստեղծի ոլորտի տարբեր բնագավառներում և ստվերային դաշտը կրճատելով՝ ներդրումների գրավչություն կապահովի:

- պետության կողմից զբոսաշրջային համալիր ծրագրերին մասնակցության ակտիվացում այնպես, որ մի կողմից պետության միջանտությունը և բաժնեմասնակցությունը արդյունավետ դարձնի ներդրումային ծրագրերի իրագործումը և մյուս կողմից, պետության կարգավորիչ գործառույթները չխաթարեն շուկայական տնտեսավարման և մրցակցային միջավայրի ձևավորման ներդաշնակությունը:

Արդյունավետության գնահատման առաջարկվող ցուցանիշները առանձնա-
նում են զբոսաշրջային գործարարարության տարբեր հարթություններում իրենց
վերլուծական մեկնաբանություններով: Այսպես, եթե N₁ ցուցանիշը բնութագրում է
ներդրումների հատույցը զբոսաշրջային գործունեության ուղղակի գործունեության
ոլորտում, ապա N₂ ցուցանիշով բնորոշվում է ներդրումներով պայմանավորված զբո-
սաշրջությանը սպասարկող այլ ճյուղերում ձևավորվող մուլտիպլիկացիոն ար-
դյունքը:

Առաջարկվող ցուցանիշները խմբավորվում են նաև ներդրումային դրական և
բացասական պատճառահետևանքային չափանիշներով: Այսպես, եթե N₅ ցուցանիշը
բնութագրում է զբոսաշրջային գործունեության դրական արդյունքներով ներդրում-
ների հատույցը, ապա N₆ ցուցանիշով բնութագրվում է զբոսաշրջային գործունեու-
թյան բացասական արդյունքների տեսակարար կշիռը ներդրումների ծավալում:
Արդյունավետության չափանիշների նման մեկնաբանումները իրենց համախումբն են
ստանում N₇ ցուցանիշի հաշվարկով: Բացի այդ, ներդրումների արդյունավետու-
թյունը նախանշող առաջարկվող չափանիշների համախումբը հնարավորություն է
ընձեռում գնահատելու ներդրումային հատույցը ժամանակի գործոնով, ներկա-
յացնելով զբոսաշրջության զարգացման ներդրումների զուտ ներկա արժեք N₈ ցու-
ցանիշը, որն իր կիրառությունն է գտնում հատկապես ներդրումային տարբերակների
ընտրության ժամանակ:

Հաշվի առնելով ներդրումային ռեսուրսների օպտիմալ բաշխման անհրա-
ժեշտությունը՝ մեր կողմից ներդրումների արդյունավետության չափանիշ է առա-
ջադրվում նաև զբոսաշրջային արդյունքի ձևավորման տարբեր հատվածների
զարգացմանն ուղղված ֆինանսական աջակցության հատույցը (տես N₁₁ ցուցանիշ):
Քանի որ զբոսաշրջային արդյունքի իրացման շուկան առնչվում է ոլորտը սպասար-
կող այլ ճյուղերի կողմից ծառայությունների բազմաբնույթ առաջարկին, ապա
անհրաժեշտություն է ծագում արժևորելու ներդրումային հատույցը զբոսաշրջության
փաթեթի առքուվաճառքի (n), զբոսաշրջության մատակարարների (m) և զբոսաշրջու-
թյանը աջակցող գործառույթների (d) շուկաներում:

Ձբոսաշրջության զարգացման ներդրումների արդյունավետության կառա-
վարման առաջարկվող մեխանիզմը հնարավորություն է ընձեռում իրատեսական կա-
ռավարչական որոշումների իրականացմանը հետևյալ առումներով.

Առաջին, ձևավորվում է այնպիսի տեղեկատվական համակարգ, որտեղ հա-
մախմբման ենթարկելով զբոսաշրջության արդյունավետությանը առնչվող ներդրու-

Ձբոսաշրջության շուկան գործում է որոշակի առանձնահատկություններով և
կարգավորման յուրահատուկ գործիքակազմով, որն առաջին հերթին պայմա-
նավորված է սպառմանն ուղղված զբոսաշրջային արտադրանքի ձևավորմամբ: Ձբո-
սաշրջային արտադրանք է համարվում առարկայական (ապրանքային) և ոչ առար-
կայական (ծառայությունների) առաջարկը, որն ուղղված է զբոսաշրջիկի պահանջ-
մունքների բավարարմանը: Այն իր մեջ ներառում է զբոսաշրջային տուրերը, ծա-
ռայությունների մատուցումը (տրանսպորտային, հյուրանոցային ապահովագրական,
ճամփորդական փաստաթղթերի ձևակերպման և այլն), ինչպես նաև զբոսաշրջային
նշանակման ապրանքակազմը: Այսպիսով, զբոսաշրջիկի տեսանկյունից զբոսա-
շրջային արտադրանքը երկակիությամբ հանդես եկող մի այնպիսի վերացական
արդյունք է, որը կրում է պոտենցիալ հնարավորություններ՝ բավարարելու սեփական
անձի ճամփորդական պահանջմունքները, ինչպես առարկայական (ենթակա-
ռուցվածքներ, ապրանքատեսակներ), այնպես էլ ոչ նյութական (ծառայություններ)
բարիքների ձևերով: Ընդ որում, եթե այդ արտադրանքի ապրանքային մասը սպառ-
ման շուկայում հանդես է գալիս իր ստանդարտ վարքագծով, ապա ծառայու-
թյունների մասով զբոսաշրջային արդյունքը ունի որոշակի առանձնահատկու-
թյուններ:

Նախ, զբոսաշրջային ծառայությունները հնարավոր չէ կոնսերվացնել կրկնա-
կի օգտագործման համար և դրա ժամանակին չսպառումը համարվում է անդամալի
տնտեսական կորուստ: Տարբերվում են զբոսաշրջային ծառայությունների մա-
տուցման ձևերը, որոնք տարածքային բազմաբնույթ ուղղվածություն ունեն և
զբոսաշրջիկի կողմից սպառվում են տարբեր ձևերով: Այսպես՝ դրանց մի մասը
(տեղեկատվական, ապահովագրական և այլն) զբոսաշրջիկները ստանում են իրենց
մշտական բնակության վայրում, մյուս մասը (տրանսպորտային, բժշկական)՝
ճամփորդական տեղաշարժերի ժամանակ, իսկ հիմնական բաժինը (գիշերակաց,
սնունդ, զվարճություններ և այլն)՝ զբոսաշրջային նշանակետի տեղանքին հասնելիս:
Դրանով իսկ, ժամանակագրական առումով անհամապատասխանություն է ստեղծ-
վում զբոսաշրջային արդյունքի առքուվաճառքի գործարքում, և առանձնահատկու-
թյուններ են դրսևորվում զբոսաշրջային ծառայությունների իրացման գործա-
ռույթների կարգավորման համակարգում:

Պահանջարկի տեսանկյունից տարբերում են երեք տիպի զբոսաշրջություն՝
ներգնա, արտագնա և ներքին, որոնք հանդես են գալիս իրենց առանձնահատուկ
ոլորտներով: Ձբոսաշրջության ծառայությունների պահանջարկը ձևավորվում է

աշխարհագրական, սոցիալ-դեմոգրաֆիական և հոգեբանական գործոններով: Սակայն, դրանց հետ մեկտեղ, առավել կարևորություն է ձեռք բերում զբոսաշրջության սեզոնայնությունը, որով կտրուկ բարձրանում է մրցակցությունը զբոսաշրջային շուկայում: Մինևույն տուրփաթեթների պահանջարկը անհամեմատ աճում է զբոսաշրջային սեզոնին (ծովափնյա, լեռնադաշտային հանգիստ և այլն), և կտրուկ նվազում սեզոնային ժամանակաշրջանից դուրս: Այս առումով զբոսաշրջության ոլորտում ներդրումային քաղաքականության սկզբունքներից մեկը սեզոնայնությանն առնչվող վնասների ռիսկայնության մեղմումն է:

Այս առումով միշտ էլ արդիական է համարվում այն հարցադրումը, թե ինչ համամասնություններով պետք է բաշխել ներդրումային ռեսուրսները զբոսաշրջային շուկայի ենթակառուցվածքային տարբեր ոլորտների միջև: Ուստի, զբոսաշրջության ոլորտում ներդրումների իրականացման նպատակահարմարության քննարկումը գրականությունում առկա ավանդական ուղղություններին զուգահեռ (զբոսաշրջային օբյեկտ, տարածաշրջան և այլն), նպատակահարմար ենք համարում իրականացնել նաև ըստ զբոսաշրջության շուկայի՝ մեր կողմից առաջարկվող հատվածավորման (տե՛ս գծապատկեր 1), որտեղ ծավալային առումով ներդրումային առավել պահանջարկ է վայելում զբոսաշրջության մատակարարների գործառույթների շուկան (հյուրանոցներ, զբոսաշրջային օբյեկտներ, փոխադրումներ, երթուղիներ), և համեմատաբար նվազ ներդրումային պահանջարկով է հանդես գալիս զբոսաշրջության ուղղակի մասնակիցների շուկան (ո):

Չետևաբար, ոլորտում ներդրումներ իրականացնելիս չափազանց կարևորվում է օպտիմալ հարաբերակցության սահմանումը շուկայի նախանշված (m), (n) և (d) հատվածներում, որով կանխորոշվում է ֆինանսական ռեսուրսների ծախսի արդյունավետությունը: Այսպես, զարգացած զբոսաշրջությամբ հայտնի եվրոպական երկրներում, որտեղ առկա է զբոսաշրջային ռեսուրսների հարուստ ներուժ և կազմակերպչական փորձ, էական ներդրումային ռեսուրսներ են ուղղվում հատկապես ոլորտի շուկայի աշխուժացման գործառույթների ընդլայնմանը (տեղեկատվության տարածում, գովազդ): Մեր հանրապետությունը, որը դեռևս մրցակցային դիրքեր չի գրավում միջազգայն զբոսաշրջության շուկայում և չունի միջազգային չափանիշներին համապատասխան զբոսաշրջային շուկայի ենթակառուցվածքներ, ներդրումների մեծ մասը նպատակահարմար է ուղղել զբոսաշրջության մատակարարների (m) հատվածին:


Սակայն, զբոսաշրջային ոլորտում ներդրումների արդյունավետության գնահատումը առաջարկվում է ոչ թե համընդհանուր ցուցանիշի, այլ ցուցանիշների համախմբի կիրառմամբ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ջբոսաշրջային ոլորտում ներդրումների արդյունավետության գնահատման առաջարկվող ցուցանիշների համախումբը⁴

Նշ.	Ցուցանիշի անվանումը	Հաշվարկը
N ₁	զբոսաշրջային գործունեության ուղղակի արդյունքի տեսակարար կշիռը ներդրումների ծավալում	$\Sigma I / \Sigma F$
N ₂	մուլտիպլիկացիոն արդյունքի տեսակարար կշիռը ներդրումների ծավալում	$\Sigma M / \Sigma F$
N ₃	զբոսաշրջության ոլորտ ներգրավվող լրացուցիչ ռեսուրսներից բխող այլընտրանքային ծախսերի տեսակարար կշիռը ներդրումների ծավալում	$\Sigma E / \Sigma F$
N ₄	զբոսաշրջային գործարարության բնապահպանական վնասների տեսակարար կշիռը ներդրումների ծավալում	$\Sigma L / \Sigma F$
N ₅	զբոսաշրջային գործունեության դրական արդյունքների տեսակարար կշիռը ներդրումների ծավալում	$(\Sigma I + \Sigma M) / \Sigma F$
N ₆	զբոսաշրջային գործունեության բացասական արդյունքների տեսակարար կշիռը ներդրումների ծավալում	$(\Sigma L + \Sigma E) / \Sigma F$
N ₇	զբոսաշրջության զարգացման ներդրումների հատույց	$(\Sigma I + \Sigma M - \Sigma L - \Sigma E) / \Sigma F$
N ₈	զբոսաշրջության զարգացման ներդրումների զուտ ներկա արժեք	$-\Sigma F$ +դիսկոնտ $(\Sigma I + \Sigma M - \Sigma L - \Sigma E)$
N ₉	զբոսաշրջային գործարարության ընդլայնումից ձևավորվող ուղղակի զուտ տարեկան եկամուտներ / մուլտիպլիկացիոն եկամուտներ	$\Sigma I / \Sigma M$
N ₁₀	զբոսաշրջային գործունեության դրական և բացասական արդյունքների հարաբերակցությունը	$(\Sigma I + \Sigma M) / (\Sigma L + \Sigma E)$
N ₁₁	ներդրումների հատույցը ըստ զբոսաշրջային շուկայի հատվածավորման	$(\Sigma I + \Sigma M - \Sigma L - \Sigma E) / \Sigma (Fm + Fn + Fd)$


⁴ Կազմվել է ատենախոսի կողմից



Գծապատկեր 3. Զբոսաշրջային արդյունքի իրացման հետևանքների տեղեկատվական համախմբման առաջարկվող մեխանիզմը³

Զբոսաշրջության զարգացման ներդրումների արդյունավետության կառավարման առաջարկվող համակարգում կարևորվում է զբոսաշրջության արդյունավետության գնահատման սկզբունքների մշակումը, և առաջին հերթին՝ չափանիշների սահմանումը: Որպես արդյունավետության չափանիշի սահմանման սկզբունք, նպատակահարմար է համարվում ընդունել տնտեսագիտության մեջ ընդունված դասական մոտեցումը, երբ որոշվում է ներդրումային ռեսուրսների տնտեսական հատույցը:

³ Կազմվել է ատենախոսի կողմից:




Գծապատկեր 1. Ներդրումային ուղղությունների հատվածավորումը զբոսաշրջության շուկայում¹

Ատենախոսության երկրորդ, «Ներդրումների մակրոտնտեսական կարգավորման հիմնահարցերը 77 զբոսաշրջության ոլորտում» գլխում վերլուծվում են զբոսաշրջության մակրոտնտեսական դրսևորումները, դրանց գնահատման և հաշվառման մոտեցումները:

Ներդրումների իրականացման տեսանկյունից զբոսաշրջության մակրոտնտեսական դրսևորումները պետք է դիտարկել՝ հաշվի առնելով եկամուտների ներհոսքը և վնասները (տե՛ս գծապատկեր 2): Զբոսաշրջային ոլորտում իրականացնելով խոշորամասշտաբ ներդրումներ՝ տնտեսական հատույցը գնահատելիս նպատակահարմար ենք գտնում ի նկատի ունենալ ոչ միայն դրական, այլև բացասական էֆեկտները, որոնց շրջանակը և մասշտաբները կարող են փոփոխվել՝ կախված զբո-

¹ Կազմված է ատենախոսի կողմից:

սաշրջային գործարարության ուղղությունից (պատմամշակութային, արկածային, սպորտային, հանգստի, առողջարանային, զվարճանքների և այլն):



Գծապատկեր 2. Ջրոսաշրջային ոլորտում ներդրումների դրական և բացասական ներազդեցությունը մակրոտնտեսական միջավայրի վրա²

² Կազմված է ատենախոսի կողմից:

քերի ավելացումները փոխկապակցվում են ոլորտում կատարված ներդրումների հետ, դրանով իսկ որոշելով վերջինիս արդյունավետությունը: Սակայն, ներդրումների արդյունավետության գնահատման նման մոտեցմամբ ուսումնասիրությունից դուրս են մնում ոչ միայն պասիվ զբոսաշրջային ժամանակահատվածի կորուստները, այլև այդ գործարարությունից բխող բացասական հետևանքները (բնապահպանական, այլընտրանքային կորուստներ և այլն), ինչպես նաև ներքին զբոսաշրջության գործունեության արդյունքները:

Ջրոսաշրջային ոլորտում ներդրումների արդյունավետության գնահատման տեղեկատվական ապահովման առումով առաջարկվում է “զբոսաշրջային արդյունքների կրիչների” կիրառումը և դրանց համակարգային հաշվառումը: “Ջրոսաշրջային արդյունքների կրիչները” գործիք են հանդիսանում զբոսաշրջային արդյունքի թողարկման և իրացման հետևանքները գնահատելու և հաշվառելու համակարգում: Դրանց կիրառումը “ուղեկցում է” զբոսաշրջային արդյունքի ձևավորման ողջ գործընթացը, առնչվելով զբոսաշրջային արդյունավետությանը փոխկապակցված սոցիալ-տնտեսական բոլոր ոլորտներին՝ համախմբելով զբոսաշրջային գործարարությունից բխող դրական և բացասական հետևանքները (տես գծապատկեր 3):

Այսպիսով, զբոսաշրջության ոլորտում ներդրումների արդյունավետության գնահատման տեղեկատվական համակարգի ձևավորման առաջարկվող մեխանիզմը հնարավորություն է ընձեռում լուծելու մի շարք հիմնախնդիր:

Առաջին՝ կատարվում է ներդրումներից բխող տնտեսական հետևանքների շարունակական ձևավորման արժևորում, խմբավորում և համախմբում, որով վերահսկողություն է սահմանվում զբոսաշրջային գործունեության ոլորտում կոնկրետ ծրագրերի հետներդրումային իրացման հետևանքային ընթացքի վրա:

Երկրորդ՝ ձևավորվում է ներդրումների արդյունավետության գնահատման տեղեկատվական ապահովվածության այնպիսի շրջանակ, որի հենքով հնարավորություն է ստեղծվում ոչ միայն արժևորելու զբոսաշրջության զարգացման ծրագրերին ուղղորդվող ռեսուրսների ծախսի հիմնավորվածությունը, այլև իրականացնելու հիմնավոր կառավարչական որոշումներ՝ ներդրումների նպատակահարմարության ուղղությամբ:

ձևավորումը զբոսաշրջային արդյունքի ստեղծման և իրացման անբաժանելի մասն է կազմում: Մեր կարծիքով, ներդրումների արդյունավետության գնահատման դասական մոտեցումները զբոսաշրջային ոլորտում պետք է զարգացվեն՝ հաշվի առնելով գործարարության այս ճյուղի առանձնահատկությունները: Եթե, ներկայումս զբոսաշրջային ոլորտի ներդրումային արդյունավետության գնահատման առավել տարածված մոտեցումներ են հանդիսանում դիսկոնտավորմամբ ներդրումային ծրագրերի զուտ ներկա արժեքի, շահութաբերության ներքին նորմայի գնահատումները, ապա դրանք առավել կիրառելի են լոկալ ծրագրային վերլուծությունների ժամանակ:

Մասնագիտական գրականությունում առաջարկվում է նաև ներդրումային ծախսահատույցի կիրառում, ելնելով զբոսաշրջային գործարարության ուղղության առանձնահատկություններից (հյուրանոցային բիզնես, առողջարանային ոլորտ, սպորտային միջոցառումներ), որը մեր կարծիքով, նույնպես չի կարող լիարժեք ներկայացնել կատարված ներդրումների արդյունավետությունը, քանի որ հաշվարկների նեղ ոլորտը հաշվի չի առնում զբոսաշրջային գործունեության մուլտիպլիկացիոն էֆեկտը:

Կարծիք է հայտնվում նաև զբոսաշրջային ոլորտում ներդրումների արդյունավետության գնահատմանը ցուցաբերել ռեզիոնալ մոտեցում, որի դեպքում համադրվում են ներդրումային ծախսերը և տարածաշրջանում զբոսաշրջիկներից ստացվող եկամուտների հավելաճը: Ընդ որում, զբոսաշրջային եկամուտների հավելաճի հիքուն դրվում է տարածաշրջանում գործող հյուրանոցային գործարարության ծավալային աճը: Սակայն, միայն հյուրանոցների համարների ամրագրման աճով կամ զբաղվածության աստիճանի բարձրացմամբ զբոսաշրջային եկամուտների հավելաճի հաշվարկը, մեր կարծիքով, ոչ իրատեսական կարող է համարվել, քանի որ զբոսաշրջիկները գիշերակացից և սննդից բացի, այլ ծախսեր են կատարում (էքսկուրսիաներ, զվարճանքի վայրեր, հուշանվերների, տեղական արտադրության ապրանքների ձեռքբերում և այլն):

Ջբոսաշրջային ոլորտում ներդրումների գնահատման մեթոդ է առաջարկվում նաև սահմանային կետերում զբոսաշրջիկների հաշվառման և ըստ ծախսունակության խմբավորման մոտեցումը, երբ ակտիվ զբոսաշրջության ամիսներին օրացուցային ժամանակահատվածում գրանցված զբոսաշրջիկները ելնելով ժամանած երկրից՝ դասակարգվում են ըստ առանձին “եկամտային խմբերի” և դրանով ելակետային հիմք ստեղծում ոլորտում ձևավորվող դրամական ներհոսքերի հաշվարկի համար: Այնուհետև, ներգնա զբոսաշրջությունից ակնկալվող դրամական ներհոս-

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիմնախնդիրներ են առաջանում մակրոտնտեսական միջավայրի վրա զբոսաշրջային գործարարության դրական և բացասական արդյունքների ոչ միայն բացահայտման, այլև չափման, արժևորման և հաշվառման ոլորտներում: Եթե թվարկած խնդիրները որոշակիորեն իրենց գործնական լուծումները ստանում են զբոսաշրջային գործարարության ուղղակի արդյունքների գնահատման ոլորտում, ապա դեռևս դրանք դժվար իրագործելի են ոլորտից բխող անուղղակի և ուղեկցող էֆեկտների տնտեսագիտական մեկնաբանումների և արժևորումների հարցում (մուլտիպլիկացիոն էֆեկտներ, բնապահպանական կորուստներ և այլն):

Այսպիսով, զբոսաշրջության ոլորտում ներդրումների մակրոտնտեսական դրսևորումների գնահատումը առնչվում է տեսական և գործնական մի շարք հիմնախնդիրների լուծումների հետ, որոնցից առաջնային ենք համարում.

- ներդրումների ֆինանսավորման ծավալների հիմնավորումը, ըստ զբոսաշրջային շուկայի առանձին հատվածների՝ զբոսաշրջային արդյունքի ձևավորում և վաճառք, զբոսաշրջային գործարարության աջակցում,
- ներդրումային բազմաբնույթ դրական և բացասական որակական ուղղակի արդյունքների շրջանակի մեկնաբանումը՝ զբոսաշրջությունը սպասարկող տնտեսության տարբեր փոխկապակցված ճյուղերի, սոցիալական և բնապահպանական կտրվածքով,
- ներդրումներով ուղեկցվող այլընտրանքային անուղղակի վնասների բացահայտումը և դրանց տնտեսագիտական արժևորումը ոչ միայն գործարարության տարբեր ուղղություններում, այլև սոցիալական և շրջակա միջավայրի պահպանման ոլորտներում,
- ներդրումային փաստացի արդյունքների արձանագրման ու հաշվառման կազմակերպումը միկրոտնտեսական միջավայրում և այդ տեղեկատվության համակարգումը մակրոմակարդակով այնպես, որ հնարավորություն ընձեռվի կազմելու համապատասխան վիճակագրական հաշվետվություններ՝ վերլուծելու համար զբոսաշրջության ոլորտում ներդրումների մակրոտնտեսական դրսևորումները և գնահատելու դրանց արդյունավետությունը:

Ջբոսաշրջության ոլորտի գների պետական կարգավորումը տարբեր կերպ է անդրադառնում ծառայությունների մատուցման շուկայի վրա: Մի դեպքում, այն հնարավորություն է ընձեռում բարձրացնելու ոլորտի մրցունակությունը կան

շահութաբերության մակարդակը, քանի որ պետությունը նպատակ է հետապնդում իրականացնելու տնտեսական կարգավորման ակտիվ քաղաքականություն: Մեկ այլ դեպքում, սուբսիդավորումը անուղղակի ճանապարհով է ակտիվացնում զբոսաշրջության ներքին շուկան, երբ կառավարության կողմից սահմանվում են զբոսաշրջային արտադրանքի գների փոխհատուցման մեխանիզմներ, վարկային տոկոսային ծախսերի մասնակի փոխհատուցումներ, ապահովագրական պոլիսների մասնակի վճարումներ: Սուբսիդավորում իրականացվում է նաև զբոսաշրջության ոլորտի կայուն գործունեության ապահովման համար, երբ պետությունը ֆինանսավորում է բնապահպանական միջոցառումներ, իրականացնում է սոցիալական պայմանների բարելավման ծրագրեր՝ դրանով իսկ կանխելով տնտեսապես թույլ զարգացած վայրերից արտագաղթը, աշխատատեղերի կորուստը: Զբոսաշրջային ծառայությունների պետական կարգավորման պարագայում մի դեպքում՝ շուկայում տեղի է ունենում մրցակցային դիրքերի վերաբաշխում, մեկ այլ դեպքում՝ ընդամենը զբոսաշրջային գործունեության կայունության ապահովում:

Զբոսաշրջային ծառայությունների պետական կարգավորումը բխում է նաև ոլորտում ներդրումների իրականացման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից և պայմանավորված է հետևյալ հանգամանքերով՝

Առաջին, զբոսաշրջության արդյունաբերությունը, լինելով տնտեսավարման բարդ օրգանիզմ, չի կարող զարգանալ առանց այն սպասարկող ենթակառուցվածքային բարեփոխումների (տրանսպորտ, կապ, ճանապարհներ և այլն), ուստի ոլորտում իրականացվող ներդրումներն անհրաժեշտ է կոորդինացնել պետական հովանու ներքո՝ ապահովելով զբոսաշրջային գործունեության համակարգի և այն սպասարկող տնտեսության ճյուղերի գործունեության ներդաշնակությունը:

Երկրորդ, զբոսաշրջության ոլորտում ներդրումների իրականացումն առնչվում է բնապահպանական, պատմաշակութային արժեքների վերահսկողության, ազգաբնակչության անվտանգության խնդիրների հետ, և դրանից ելնելով, պետական կարգավորման կարիք է զգում:

Երրորդ, զբոսաշրջային ծառայությունների մատուցման ակտիվացումը լուծում է լրացուցիչ աշխատատեղերի, որակավորված կադրերի, տեղի բնակչության միգրացիայի կանխարգելման, տարածքային համաչափ զարգացման հիմնահարցեր, ուստի այդ ոլորտում իրականացվող ներդրումները պետք է օպտիմալ բաշխվածությամբ դրսևորվեն, որը դժվար իրագործելի է առանց պետական միջամտության:

Չորրորդ, զբոսաշրջային ոլորտում իրականացվող ներդրումները համեմատաբար խորշոր ծավալներ ունեն և միայն մասնավոր սեկտորի կողմից դժվար իրագործելի են, ուստի այս հարցում պետության մասնակցությունը շատ հաճախ անհրաժեշտություն է դառնում:

Ատենախոսության երրորդ՝ **«Զբոսաշրջության զարգացման ներդրումների արդյունավետության կառավարման կատարելագործումը ՀՀ-ում»** զլխում կատարվել են առաջարկություններ՝ ներդրումների արդյունավետության գնահատման տեղեկատվական համակարգի և ոլորտում կառավարչական որոշումների բարելավումների ուղղությամբ:

Զբոսաշրջային արդյունաբերության համակարգը ներկայացվում է երկու հիմնական հարթությամբ՝ ոլորտն անմիջականորեն սպասարկող ճյուղեր և աջակցող ենթակառուցվածքներ: Զբոսաշրջության արդյունաբերության շարժիչ ներուժը առավելապես դրսևորվում է ոլորտն անմիջականորեն սպասարկող ճյուղերում (հյուրանոցային տնտեսություններ, զվարճանքի, հանգստի, սպորտային, արկածային, պատմաշակութային, առողջարանային օբյեկտներ, ներհանրապետական և միջազգային տրանսպորտային ուղիներ և այլն), որտեղ իրականացվում է արտադրված զբոսաշրջային արդյունքի վերջնական սպառումը: Սակայն, զբոսաշրջային արդյունաբերությունը չի կարող անխափան գործել առանց ոլորտի անընդհատությունն ապահովող ենթակառուցվածքների (ճանապարհաշինություն, ապահովագրական, գովազդային համակարգեր) և օրգանապես փոխկապակցված ճյուղերի, որտեղ չնայած որ չի իրականացվում զբոսաշրջային արդյունքի անմիջական իրացում, սակայն պայմաններ են ստեղծվում տվյալ գործարարության անուղղակի աջակցման համար:

Գործնականում զբոսաշրջային գործունեության մակրո և միկրո տնտեսական արդյունքների հաշվառման ներդաշնակության հիմնախնդիր է առաջանում: Մակրոտնտեսական հաշվառումն իրականացվում է ազգային հաշիվների համակարգով, իսկ միկրոնակարգակում կազմակերպությունների տնտեսական գործունեության հաշվառումն իրականացվում է կրկնակի գրանցմամբ: Ուստի, երբ իրականացվում է զբոսաշրջային գործարարության տնտեսական գործունեության հաշվառման արդյունքների ամփոփում և միկրոնակարգակից տեղափոխում մակրոնակարգակ, հնարավորություն է ստեղծվում կրկնակի գրանցմամբ կազմակերպելու ազգային տնտեսության մակրոտնտեսական հաշվառում:

Այս առումով, միկրոնակարգակից մինչև համախմբված ազգային հաշիվներ, ներդրումների արդյունավետության գնահատման տեղեկատվական համակարգի